

## Խորհրդի 1992 թվականի մարտի 31-ի 92/29/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳ

### Նավերի վրա բժշկական սպասարկումը բարելավելու նպատակով անվտանգության եւ առողջության նվազագույն պահանջների մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 118ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1), որը կազմվել է Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի եւ առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի կարծիքը (3),

քանի որ «Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի եւ առողջության մասին» ծրագրի մասով Հանձնաժողովի հաղորդագրությամբ (4) նախատեսվում են միջոցներ՝ ապահովելու համար բժշկական սպասարկումը ծովում,

քանի որ հատուկ ուշադրություն է պահանջվում այն աշխատողների անվտանգության եւ առողջության համար, ովքեր ծառայում են նավի վրա, որն այնպիսի աշխատավայր է, ուր առկա են բազմաբնույթ ռիսկեր, հաշվի առնելով, ի թիվս այլ ռիսկերի, մասնավորապես, նավի աշխարհագրական դիրքը,

քանի որ նավերը պետք է համալրված լինեն բավարար բժշկական պարագաներով, որոնք պահվում են ճիշտ պայմաններում եւ պարբերաբար ստուգում են անցնում այնպես, որ աշխատողները կարողանան անհրաժեշտ բժշկական սպասարկում ստանալ ծովում,

քանի որ ծովում բավարար մակարդակի բժշկական սպասարկում ապահովելու համար պետք է խրախուսվի ծովագնացների վերապատրաստումը եւ նրանց տեղեկատվություն տրամադրելը՝ կապված բժշկական պարագաների օգտագործման հետ,

քանի որ բժշկական խորհրդատվության հեռահար մեթոդների կիրառությունը աշխատողների անվտանգության եւ առողջության պաշտպանության արդյունավետ եղանակ է,

*Հոդված 1*

**Սահմանումները**

Սույն Հրահանգի նպատակով տվյալ հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստներով.

ա) **նավ՝** անդամ պետության դրոշի ներքո նավարկող կամ անդամ պետության ամբողջական իրավագորության ներքո գտնվող ցանկացած ծովագնաց կամ գետաբերանային ձկնորսական նավ, որը պետական կամ մասնավոր սեփականություն է, բացառությամբ

– ափամերձ նավարկության նավերի,

– ռազմական նավերի,

– ժամանցի նավակների, որոնք օգտագործվում են ոչ առևտրային նպատակներով եւ չունեն մասնագիտական անձնակազմ,

– քարշիչային նավերի, որոնք աշխատում են նավահանգիստների մոտակա տարածքներում:

Նավերը դասվում են երեք կատեգորիայի՝ I հավելվածի համաձայն.

բ) **աշխատող՝** ցանկացած անձ, ով նավի վրա աշխատանք է կատարում: Սրանց շարքում ներառվում են վերապատրաստում անցնող անձինք եւ փորձնակները, սակայն չեն ներառվում նավահանգստում աշխատող լոցմանները եւ ափին աշխատող անձնակազմը, որը առափնյակում աշխատանք է կատարում նավի վրա.

գ) **սեփականատեր՝** նավի գրանցված սեփականատերը, եթե այդ նավը վարձով տրված չէ վարձակալության հիմունքով կամ եթե այն մասամբ կամ ամբողջությամբ չի կառավարվում կառավարման պայմանագրի համաձայն սեփականատեր չհամարվող ֆիզիկական կամ իրավաբանական որեւէ անձի կողմից. այդ դեպքում սեփականատեր համարվում է վարձակալող նավավարձորողը կամ նավը կառավարող ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ համապատասխանաբար.

դ) **բժշկական պարագաներ՝** դեղեր, բժշկական սարքեր եւ սարքավորումներ, ինչպես նաեւ հակաթոյններ, որոնց ոչ ամբողջական ցանկը տրված է II հավելվածում.

ե) **հակաթույն**՝ նյութ, որը բուժելու նպատակով օգտագործվում է III հավելվածի վտանգավոր նյութերի ցանկում նշված նյութերից մեկի կամ մի քանիսի վնասակար ազդեցությունը կամ ազդեցությունները կանխարգելելու համար :

## Հոդված 2

### **Դեղեր եւ բժշկական սարքեր ու սարքավորումները. Նավի հիվանդանոցը (լազարեթը). բժիշկը**

Յուրաքանչյուր անդամ պետություն միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու համար, որպեսզի՝

1. ա) յուրաքանչյուր նավ, որը նավարկում է իր դրոշի ներքո կամ գտնվում է իր ամբողջական իրավագործության ներքո, ունենա բժշկական պարագաներ, որոնք որակի առումով առնվազն բավարարեն II հավելվածի I բաժնում սահմանված տեխնիկական հատկորոշումները նավի այն կատեգորիայի համար, որտեղ տեղակայված են դրանք.

բ) բժշկական ապրանքների կամ բժշկական սարքերի եւ սարքավորումների քանակությունը կախված է նավարկության բնույթից, մասնավորապես, մուտքի նավահանգիստներից, նպատակակետից, նավարկության տեւողությունից, ինչպես նաեւ աշխատանքի տեսակից կամ տեսակներից, որը պետք է իրականացվի նավարկության ժամանակ, ուղեբեռի տեսակից եւ աշխատողների թվից.

գ) բժշկական պարագաների շարքում ներառված դեղերի եւ բժշկական սարքերի ու սարքավորումների ցանկը մանրամասնվում է ստուգացանկում, որը համապատասխանում է առնվազն IV հավելվածի Ա, Բ եւ Գ II 1 եւ II 2 բաժինների ընդհանուր շրջանակին.

2. ա) յուրաքանչյուր նավ, որը նավարկում է իր դրոշի ներքո կամ գտնվում է իր ամբողջական իրավագործության ներքո, յուրաքանչյուր փրկարար լաստի կամ փրկարար մակույկի համար ունենա անջրանցիկ բժշկական դեղատուփ, որը պարունակում է առնվազն II հավելվածի I եւ II բաժիններում սահմանված բժշկական պարագաները՝ C կատեգորիայի նավերի համար.

բ) այդ դեղարկղերի պարունակությունը նույնպես մանրամասնվում է 1(գ) պարբերության ստուգացանկում.

3. յուրաքանչյուր նավ, որը նավարկում է իր դրոշի ներքո կամ գրանցված է իր լիակատար իրավագործության ներքո եւ ունի 500 տոննայից բարձր արձանագրված բրուտտո քաշ, ունի

15 կամ ավելի աշխատողներից բաղկացած անձնակազմ եւ նավարկում է երեք օրից ավելի, ունենա լազարեթ, որտեղ հնարավոր է բուժում անցկացնել նյութական եւ հիգիենիկ բավարար պայմաններում.

4. յուրաքանչյուր նավ, որը նավարկում է իր դրոշի ներքո կամ գրանցված է իր լիակատար իրավագործության ներքո եւ ունի 100 կամ ավելի աշխատողներ, որը գտնվում է միջազգային նավարկության մեջ երեքից ավելի օրերի ընթացքում, ունենա բժիշկ, որը պատասխանատու է տախտակամածի աշխատողների բժշկական խնամքի համար:

### *Հոդված 3*

#### **Հակաթույները**

Յուրաքանչյուր անդամ պետություն ձեռնարկում է միջոցներ՝ ապահովելու համար, որպեսզի՝

1. յուրաքանչյուր նավ, որը նավարկում է իր դրոշի ներքո կամ գտնվում է իր ամբողջական իրավագործության ներքո եւ կրում է III հավելվածում նշված վտանգավոր նյութերից որեւէ մեկը, նավի վրա ունենա բժշկական պարագաներ, որոնք պարունակում են առնվազն II հավելվածի III բաժնում նշված հակաթույները.

2. ցանկացած լաստանավ, որը նավարկում է իր դրոշի ներքո կամ գտնվում է իր ամբողջական իրավագործության ներքո, աշխատում է այնպիսի պայմաններով, որոնց դեպքում միշտ չէ որ նախօրոք հայտնի է տեղափոխվող վտանգավոր նյութերի տեսակը, նավի վրա ունենա բժշկական պարագաներ, որոնք պարունակում են առնվազն II հավելվածի III բաժնում նշված հակաթույները:

Այնուամենայնիվ, սովորաբար, երբ ազդեցությունը տեսում է երկու ժամից քիչ, հարկավոր է սահմանափակվել այն հակաթույներով, որոնք օգտագործվում են բացառիկ արտակարգ դեպքերում այնպիսի ժամանակահատվածով, որը չի գերազանցում հակազդեցության սովորական տեւողությունը:

3. հակաթույների հետ կապված բժշկական պարագաների պարունակությունը մանրամասնվում է ստուգացանկում, որը համապատասխանում է առնվազն IV հավելվածի Ա, Բ եւ Գ, II 3 բաժիններում սահմանված ընդհանուր օրենսդրական շրջանակին:

#### Հոդված 4

### **Պարտավորությունների բաշխումը**

Յուրաքանչյուր անդամ պետություն ձեռնարկում է միջոցներ՝ ապահովելու համար, որպեսզի՝

1. ա) իր դրոշի ներքո կամ իր լիակատար իրավագործության ներքո նավարկող ցանկացած նավի բժշկական պարագաներով մատակարարումը եւ համալրումը կատարվի բացառապես սեփականատիրոջ պատասխանատվությամբ, որի համար աշխատողները որեւէ ծախս չեն կատարում.

բ) բժշկական պարագաների տնօրինումը նավի կապիտանի պատասխանատվությունն է. չսահմանափակելով իր պարտավորությունները՝ նա կարող է բժշկական պարագաների օգտագործման եւ պահպանման պարտականությունը փոխանցել մեկ կամ մի քանի աշխատողների, որոնք հատուկ նշանակվել են այդ պաշտոնում իրենց ունակությունների հիմքով.

2. բժշկական պարագաները պահպանվում են լավ պայմաններում եւ համալրվում եւ (կամ) փոխարինվում են հնարավորինս շուտ՝ որպես պաշարների համալրման նորմալ ընթացակարգի կարելու մաս.

3. կապիտանի կողմից հայտարարված հրատապ իրավիճակում, որը պետք է կատարվի բժշկական եզրակացություն ստանալուց անմիջապես հետո, պահանջվող դեղերը, բժշկական սարքերը եւ սարքավորումները, ինչպես նաեւ հակաթույները, որոնք բացակայում են նավից, հնարավորինս շուտ բերվում են նավ:

#### Հոդված 5

### **Տեղեկատվությունը եւ վերապատրաստումը**

Յուրաքանչյուր անդամ պետություն ձեռնարկում է միջոցներ՝ ապահովելու համար, որպեսզի՝

1. բժշկական պարագաներին կից լինեն մեկ կամ մի քանի օգտագործման ուղեցույցեր, ներառյալ ցուցումներ առնվազն այն հակաթույների օգտագործման մասին, որոնք նշված են II հավելվածի III բաժնում.

2. բոլոր անձինք, որոնք ստացել են մասնագիտական վերապատրաստում ծովում աշխատելու համար եւ նպատակ ունեն աշխատել նավի վրա, վերապատրաստվեն

բժշկական եւ հրատապ իրավիճակներում օգտագործվող միջոցների հարցերով, որոնք պետք է ձեռնարկվեն անմիջապես պատահարի կամ բժշկական լուրջ հրատապ իրավիճակի դեպքում.

3. կապիտանը եւ որեւէ աշխատող կամ աշխատողներ, ում կապիտանը հանձնարարել է բժշկական պարագաների օգտագործումը՝ 4 (1) (բ) հոդվածի համաձայն, անցնեն պարբերաբար նորացվող հատուկ վերապատրաստում առնվազն հինգ տարին մեկ անգամ՝ հաշվի առնելով հատուկ ռիսկերը եւ պահանջները, որոնք կապված են նավերի տարբեր կատեգորիաների հետ, ինչպես նաեւ V հավելվածի ընդհանուր ուղեցույցների համաձայն:

### *Հոդված 6*

#### **Ռադիոյով բժշկական խորհրդատվությունը**

1. Աշխատողների առավել լավ բուժում ապահովելու համար հրատապ իրավիճակներում՝ յուրաքանչյուր անդամ պետություն ձեռնարկում է միջոցներ ապահովելու համար, որպեսզի՝

ա) նախատեսվեն մեկ կամ մի քանի կենտրոններ՝ ռադիոյով աշխատողներին անվճար բժշկական խորհրդատվության համար.

բ) ռադիո խորհրդատվության կենտրոնի ծառայություններ մատուցող բժիշկներից ոմանք վերապատրաստում անցած լինեն հատուկ պայմանների վերաբերյալ, որոնք գերակայում են տվյալ նավում:

2. տրվող խորհուրդները օպտիմալացնելու համար, ռադիո խորհրդատվության կենտրոնները կարող են պահել անձնական բժշկական քարտեր՝ համապատասխան աշխատողի համաձայնությունն ստանալուց հետո:

Նման քարտերը պահպանվում են գաղտնիության պայմաններում:

### *Հոդված 7*

#### **Տեսչական ստուգումները**

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ձեռնարկում է միջոցներ ապահովելու համար, որ որեւէ իրավասու անձ կամ իրավասու մարմին տարին մեկ անգամ իրականացնի տեսչական ստուգումներ՝ ստուգելու համար, որ իր դրոշի տակ նավարկող նավի վրա.

- բժշկական պարագաները բավարարեն սույն Հրահանգի նվազագույն պահանջները.
- 2(1)(գ) հոդվածում սահմանված ստուգացանկով հաստատվի, որ բժշկական պարագաները պահպանում են նվազագույն պահանջները.
- բժշկական պարագաները ճիշտ պահեստավորված լինեն.
- պիտանիության հետ կապված ժամկետները պահպանված լինեն:

2. Փրկարար լաստի վրա պահվող բժշկական պարագաների տեսչական ստուգումներն իրականացվում են այդ լաստերի տարեկան տեխնիկական սպասարկման ընթացքում:

Այդ ստուգումները կարող են բացառիկ դեպքերում հետաձգվել մինչեւ հինգ ամիս ժամկետով:

### *Հոդված 8*

#### **Կոմիտեն**

1. Կոմիտեն, որը ձեւավորված է անդամ պետությունների ներկայացուցիչներից եւ որին նախագահում է Հանձնաժողովի ներկայացուցիչը, աջակցում է Հանձնաժողովին՝ հավելվածները տեխնիկապես սույն Հրահանգին խստորեն հարմարեցնելու նպատակով՝ հաշվի առնելով այս ոլորտում տեխնիկական առաջընթացը կամ միջազգային կանոնակարգերում, կամ տեխնիկական պայմաններում կատարված փոփոխությունները եւ նոր արդյունքները:

2. Հանձնաժողովի ներկայացուցիչը Կոմիտե է ներկայացնում ձեռնարկվելիք միջոցների նախագիծը: Կոմիտեն նախագծի վերաբերյալ իր եզրակացությունը ներկայացնում է ըստ խնդրի հրատապության՝ նախագահի կողմից սահմանված ժամկետում: Եզրակացությունն ընդունվում է Պայմանագրի 148(2) հոդվածով սահմանված մեծամասնության կողմից այն որոշումների դեպքում, որոնք Խորհուրդը պետք է ընդունի Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա: Կոմիտեի շրջանակներում անդամ պետությունների ներկայացուցիչների ձայները հաշվարկվում են այդ հոդվածով սահմանված կարգով: Նախագահը ձայնի իրավունք չունի:

3. Հանձնաժողովն ընդունում է նախատեսված միջոցները, եթե դրանք համապատասխանում են կոմիտեի եզրակացությանը:

Եթե նախատեսված միջոցառումները չեն համապատասխանում կոմիտեի եզրակացությանը, կամ եթե եզրակացություն չի ներկայացվում, Հանձնաժողովը ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ Խորհուրդ անհապաղ առաջարկ է ներկայացնում: Խորհուրդը որոշում է կայացնում ձայների որակյալ մեծամասնությամբ:

Եթե Խորհրդին դիմելուց հետո եռամսյա ժամկետի ավարտին Խորհուրդը որոշում չի կայացրել, ապա առաջարկված միջոցներն ընդունվում են Հանձնաժողովի կողմից:

### *Հոդված 9*

#### **Եզրափակիչ դրույթներ**

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ իրավական նորմերը, կանոնակարգերն ու վարչական ակտերը 1994 թվականի դեկտեմբերի 31-ից ոչ ուշ: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից նշված ակտերի ընդունման դեպքում, դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին կամ, դրանց պաշտոնական հրապարակման դեպքում, դրանք պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի տեքստերը, որոնք նրանք արդեն ընդունել կամ պետք է ընդունեն սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

3. Անդամ պետությունները, յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ, Հանձնաժողով հաշվետվություն են ներկայացնում սույն Հրահանգի գործնական իրականացման մասին՝ նշելով գործատուների եւ աշխատողների տեսակետները:

Հանձնաժողովը տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի եւ առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեին:

4. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ ու Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտե սույն Հրահանգի կիրառման վերաբերյալ զեկույց է ներկայացնում առնվազն հինգ տարին մեկ՝ հաշվի առնելով 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունները:



## Հոդված 10

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1992 թվականի մարտի 31-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Վիտոր ՄԱՐՏԻՆՍ

- 1) ՊՏ թիվ C 183, 24.07.1990թ., էջ 6 եւ ՊՏ թիվ C 74, 20.03.1991թ., էջ 11:
- 2) ՊՏ թիվ C 48, 25.02.1991թ., էջ 154 եւ ՊՏ թիվ C 326, 16.12.1991թ., էջ 72:
- 3) ՊՏ թիվ C 332, 31.12.1990թ., էջ 165:
- 4) ՊՏ թիվ C 28, 03.02.1988թ., էջ 3:

**ՆԱՎԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ (Հոդված 1 (ա))**

A. Ծովային կամ ծովային ջրերի ձկնորսական նավեր՝ անկախ նավարկության տեսողությունից:

B. Ծովային կամ ծովային ջրերի ձկնորսական նավ, որը կատարում է 150 ծովային մղոնից պակաս հեռավորության նավարկություն ամենամոտիկ նավահանգստից՝ համալրված բավարար բժշկական սարքերով եւ սարքավորումներով (1).

C. Նավահանգստային նավեր, նավակներ եւ ծովային փոխադրամիջոցներ, որոնք նավարկում են ափին շատ մոտիկ կամ ղեկախցիկից բացի այլ նավախուցեր չունեն

1) B կատեգորիան ընդգրկում է նաեւ ծովային կամ ծովային ջրերի ձկնորսական նավերը, որոնք կատարում են 175 ծովային մղոնից պակաս հեռավորության նավարկություն ամենամոտիկ նավահանգստից՝ համալրված բավարար բժշկական սարքերով եւ սարքավորումներով ու փրկարար ծառայության հասանելիության տարածքում մշտապես գտնվող ուղղաթիռով: Այդ նպատակով յուրաքանչյուր անդամ պետություն թարմ տվյալներ է ուղարկում այն տարածքների մասին, որտեղ ծավալվում է ուղղաթիռային փրկարար ծառայությունը եւ այդ ծառայության շահագործման հանգամանքների մասին. ա) այլ անդամ պետություններին ու Հանձնաժողովին. եւ բ) իր դրոշի ներքո կամ իր ամբողջական իրավազորության ներքո գտնվող նավերի նավապետերին, որոնք օգտվում են կամ կարող են օգտվել սույն հետգրության առաջին ենթապարբերության գործողությունից. տեղեկությունները տրամադրվում են ամենահարմար տարբերակով, օրինակ՝ ռադիո-խորհրդատվության կենտրոնների, փրկարար աշխատանքների համակարգման կենտրոնների եւ ծովափնյա ռադիոկայանների միջոցով:

**ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ (ՈՉ ԼՐԻՎ ՑՈՒՑԱԿ) (Հոդված 1 (դ))**

I. ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ

Նավերի կատեգորիաներ

1. Սրտանոթային

ա) Սրտանոթային արյան շրջանառության անալիզատիկներ – սիմպատոմիմետիկներ ××

բ) Բկաբորբի (անգինա) դեմ պատրաստուկ ×××

գ) Միզամուղ միջոցներ ××

դ) հակահեմոռագիկ միջոցներ՝ ներառյալ ուտերոտոնիկները, եթե նավի վրա կանայք կան ×××

ե) հակահիպերտենզիվ միջոցներ ×

2. Ստամոքսաաղիքային համակարգ

ա) Ստամոքսի լորձաթաղանթի բորբոքման (գաստրիտի) եւ տասներկուամատնյա աղիքի (դուոդենիտային) խախտումների համար դեղամիջոցներ

– Հիստամին H2 ռեցեպտոր հակախոցային անտագոնիկ միջոցներ ×

– Լորձաթաղանթի հակաթթվային վիրակապեր ××

բ) Հակափսխումային դեղամիջոցներ ×××

գ) Լուբրիկանտ լուծողականներ ×

դ) Հակալուծողական դեղամիջոցներ×××

ե) Աղիքային հիվանդությունների դեմ հականեխիչներ ××

զ) Թուրքի դեմ պատրաստուկներ××

3. Անալգետիկ եւ սպազմոլիտիկ դեղամիջոցներ

ա) Անալգետիկ, ջերմիջեցնող եւ հակաբորբոքային պատրաստուկներ ×××

բ) Հզոր անալգետիկ դեղամիջոցներ ××

գ) Սպազմոլիտիկ դեղամիջոցներ ××

4. Նյարդային համակարգ

ա) Տազնապամարիչ դեղամիջոցներ ××

բ) Նեյրոլեպտիկ դեղամիջոցներ ××

գ) Ծովախստի դեմ դեղամիջոցներ ×××

դ) Հակաէպիլեպտիկ դեղամիջոցներ ×

5. Հակաալերգեն եւ անաֆիլակտիկ դեղամիջոցներ

ա) H1 հակահիստամինային միջոցներ ××

բ) Սրսկման գլյուկոկորտիկոիդներ ××

6. Շնչառական համակարգ

ա) Բրոնխոսպազմի պատրաստուկներ ××

բ) Հազի դեմ դեղամիջոցներ ××

գ) Մրսածության եւ սինուսիտի ժամանակ օգտագործվող դեղամիջոցներ ××

Նավերի կատեգորիաներ

7. Հակավարակիչ

ա) Հակաբիոտիկներ (առնվազն երկու խմբի) ××

բ) Հակաբակտերիալ սուլֆամիդ ××

գ) Երիկամների (միզային) հականեխիչներ (անտիսեպտիկ) ×

դ) Հակամակաբուժային դեղամիջոցներ××

ե) Ադիքային հակավարակիչ միջոցներ ××

զ) Փայտացման (տետանուս) դեմ պատվաստանյութեր եւ իմունոգլոբուլիններ ××

8. Ռեհիդրատացիա, կալորիականություն եւ պլազմայի լայնացումը խթանող միացություններ ××

9. Արտաքին օգտագործման դեղամիջոցներ

ա) Վերմաշկային դեղամիջոցներ

- Հականեխիչ լուծույթներ ×××
- Հակաբիոտիկ քսուկներ ××
- Հակաբորբոքիչ եւ անալգետիկ քսուկներ ××
- Հակասնկային մաշկային կրեմներ ×
- Այրվածքների դեմ պատրաստուկներ ×××

բ) Աչքի դեղամիջոցներ

- Հակաբիոտիկ կաթիլներ ××
- Հակաբիոտիկ եւ հակաբորբոքային կաթիլներ ××
- Անզգայացնող կաթիլներ ××
- Աչքի բիբի լարվածությունը հանող (հիպոտոնիկ) կաթիլներ ××

գ) Ականջի դեղամիջոցներ

- Հակաբիոտիկ լուծույթներ ××
- Անզգայացնող եւ հակաբորբոքային լուծույթներ ××

դ) Բերանի եւ կոկորդի վարակման դեպքում օգտագործվող դեղամիջոցներ

- Բերանի ողողման հակաբիոտիկ եւ հականեխիչ միջոցներ××

ե) Տեղային անզգայացման դեղամիջոցներ

- Սառեցման միջոցով տեղային անզգայացման դեղամիջոցներ×
- Տեղային անզգայացման միջոցներ ներմաշկային սրսկման միջոցով ××
- Ատամնաբուժական անզգայացման միջոցներ եւ հականեխիչ խառնուրդներ ××

II. ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Նավերի կատեգորիաներ

1. Վերակենդանացման սարքեր եւ սարքավորումներ

- Ձեռքով աշխատող վերակենդանացման սարք ××

– Ճնշումը նվազեցնող փակույրի միջոցով կարգավորվող թթվածնի մատակարարման սարք, որով հնարավոր է օգտագործել նավի տեխնիկական թթվածինը կամ թթվածնի տարաները××(1)

– Մեխանիկական ներծծիչ գործիք (ասպիրատոր)՝ վերին շնչառական ուղիները մաքրելու համար ××

– Բերանից բերան վերակենդանացման խողովակ ×××

## 2. Վիրակապեր եւ կարան դնելու միջոցներ

– Մեկանգամյա օգտագործման կարիչ կամ կարանի տուփ՝ ասեղներով ××

– Էլաստիկ կաչող վիրակապ×××

– Բինտ-թանգիֆ (մառլյա) ×

– Թանգիֆից տամպոն՝ մատների վիրակապի համար ×

– Մանրէազերծ (ստերիլ) թանգիֆից կոմպրես ×××

– Բամբակ ××

– Մանրէազերծ սավան՝ այրվածք ստացածների համար ××

– Եռանկյունաձեւ վիրակապ ××

– Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենից ձեռնոցներ ×××

– Կաչուն վիրակապ ×××

– Մանրէազերծ (ստերիլ) սեղմող վիրակապ ×××

– Կաչուն կարան կամ ցինկի օքսիդի վիրակապեր ×××

– Չներծծվող կարաններ ասեղների հետ ×

– Վազելինով ներծծված թանգիֆ ××

## 3. Գործիքներ

– Մեկանգամյա օգտագործման վիրադանակներ (սկալպելներ) ×

– Չժանգոտվող պողպատից գործիքների տուփ ××

– Մկրատներ ××

- Հերձման արքաններ ××
- Արյունը դադարեցնող (հեմոստատիկ) կեռիկներ ××
- Ասեղ արքաններ ×
- Մեկանգամյա օգտագործման ածելիներ ×

4. Հիվանդների հետազոտման եւ հսկողության սարքեր

- Մեկանգամյա օգտագործման՝ լեզուն սեղմելու տափակ գործիք ××
- Մեզի հետազոտության (անալիզի) համար ռեակտիվ շերտեր ×
- Ջերմաստիճանային գրաֆիկներ×
- Բժշկական տարատեղման սավաններ ××
- Ստետոսկոպ ××
- Մեմբրանային սֆիզոմանոմետր ××
- Ստանդարտ բժշկական ջերմաչափ ××
- Հիպոթերմիկ ջերմաչափ ××

1) Ազգային իրավունքով եւ (կամ) պրակտիկայով սահմանված օգտագործման պայմանների համաձայն

Նավերի կատեգորիաներ

5. Սրսկման, պերֆուզիայի, պունկցիայի եւ զոնդավորման սարքեր

- Ուռուլոգիայի դրենաժի գործիքներ ×
- Ռեկտալ ներլցման հավաքակազմ ×
- Մեկանգամյա օգտագործման՝ ֆիլտրին միացրած ներարկման սարք×××
- Մեզի դրենաժի պայուսակ ×
- Մեկանգամյա օգտագործման ներարկիչներ եւ ասեղներ ××
- Փողածող ( կաթետեր)×

6. Ընդհանուր բժշկական սարքեր եւ սարքավորումներ



– Պետքանոթ – տակդիր ×

– Ջեռակ ×

– Մեզի շիշ ×

– Սառույցի տոպրակ ×

7. Անշարժացման եւ տեղավորման սարքեր

– Մատի անշարժացման ճկուն շինա××

– Նախաբազկի եւ ձեռքի անշարժացման ճկուն շինա××

– Փչովի շինա××

– Ազդրի շինա××

– Վիզն անշարժացնելու համար օձիք ××

– Թոմասի շինա կամ հատուկ ներքնակ×

8. Ախտահանում, միջատազերծում եւ կանխարգելում (պրոֆիլակտիկա)

– Ջրային ախտահանող բաղադրություն ×

– Հեղուկ միջատասպան ×

– Փոշի միջատասպան ×

III. ՀԱԿԱԹՈՒՅՆԵՐ 1. Դեղամիջոցներ

– Ընդհանուր

–Սրտանոթային

– Ստամոքս-աղիքային համակարգ

–Նյարդային համակարգ

– Շնչառական համակարգ

– Հակավարակիչ (հակահիֆեկցոն)

– Արտաքին օգտագործման դեղամիջոցներ

2. Բժշկական սարքեր եւ սարքավորումներ

– Թթվաձին մատակարարելու համար (ներառյալ տեխնիկական սպասարկումը)

Ծանոթագրություն.

Անդամ պետությունները III բաժնի մանրամասն իրականացման համար կարող են օգտվել ԾՄԿ «Առաջին բուժօգնություն» ուղեցույցից՝ վտանգավոր ապրանքների հետ կապված պատահարների ժամանակ օգտագործելու համար, որոնք ներառված են ԾՄԿ Ծովային վտանգավոր բեռների միջազգային կանոնագրքում:

Ց-րդ հոդվածը կիրառելու ժամանակ կարելի է հաշվի առնել III բաժնի բոլոր փոփոխությունները, այդ թվում՝ «Առաջին բուժօգնություն» ուղեցույցում կատարված փոփոխությունները:

### ՀԱՎԵԼՎԱԾ III

#### ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐ (1 (ե) հոդված եւ 3 (1) հոդված)

Սույն հավելվածում նշված նյութերը պետք է հաշվի առնվեն ցանկացած ձեռք, որով դրանք ներկրվել են նավ՝ ներառյալ թափոնները եւ բեռների մնացորդները:

- Պայթյունավտանգ նյութեր եւ պարագաներ
- Գազեր՝ սեղմված, հեղուկացված կամ ճնշման տակ լուծված.
- Դյուրավառ հեղուկներ.
- Դյուրավառ պինդ նյութեր.
- Նյութեր, որոնք ունակ են ինքնաբռնկման.
- Նյութեր, որոնք ջրի հետ փոխազդելիս, արտազատում են դյուրավառ գազեր.
- Պայթյունավտանգ նյութեր.
- Օրգանական պերօքսիդներ.
- Թունավոր նյութեր.
- Վարակիչ նյութեր.
- Ռադիոակտիվ նյութեր.
- Քայքայիչ նյութեր.
- Տարբեր վտանգավոր նյութերը, այսինքն այնպիսի նյութերը, որոնց դեպքում փորձը ցույց է տվել կամ կարող է ցույց տալ, որ դրանք վտանգավոր են՝ անհրաժեշտություն ստեղծելով կիրառելու 3-րդ հոդվածի դրույթները:

Ծանոթագրություն.

Անդամ պետությունները սույն հավելվածի մանրամասն կիրառման համար, կարող են օգտվել ԾՄԿ Ծովային վտանգավոր բեռների միջազգային կանոնագրքի 1990 թվականի համահավաք հրատարակությունից:

8-րդ հոդվածի իրականացման ժամանակ կարելի է հաշվի առնել III բաժնի բոլոր փոփոխությունները, այդ թվում՝ ԾՄԿ Ծովային վտանգավոր բեռների միջազգային կանոնագրքում կատարված փոփոխությունները:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

**ՆԱՎԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐՋԱՆԱԿ (2 (1) (գ)  
հոդված, 3 (3) հոդված)**

ԲԱԺԻՆ «Ա» «Ա» ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՆԱՎԵՐ

I. Նավի մասին տեղեկություններ

Անվանումը՝

Դրոշը՝

Մայր նավահանգիստը՝

II. Բժշկական պարագաներ

1. ԴԵՂԱՄԻՋՈՅՆԵՐ

1.1. Սրտանոթային՝

ա) սրտանոթային անալեպտիկներ – սիմպատոմիմետիկ 000

բ) Բկաբորբի (անգինա) դեմ պատրաստուկներ 000

գ) Միզամուղ (դիուրետիկ) միջոցներ 000

դ) Հակահեմոռագիկ միջոցներ՝ ներառյալ ուտերոտոնիկները, եթե նավի վրա կանայք կան 000

ե) հակահիպերտենզիվ միջոցներ 000

1.2. Ստամոքսաաղիքային համակարգ

ա) Ստամոքսի լորձաթաղանթի բորբոքման (գաստրիտ) եւ տասներկուամատնյա աղիքի (դուոդենիտային) խախտումների համար դեղամիջոցներ

– Հիստամինի H2 ռեցեպտոր հակախոցային անտագոնիկ միջոցներ 000

– Հակաթթվային լորձային վիրակապեր 000

բ) Փսխումների դեմ միջոցներ 000

գ) Լուբրիկանտ լուծողականներ 000

դ) Հակալուծողականներ 000

ե) Աղիքային հիվանդությունների դեմ հականեխիչներ 000

զ) Թուֆքի դեմ պատրաստուկներ 000

1.3. Անալգետիկ եւ սպազմոլիտիկ միջոցներ

ա) Անալգետիկ, ջերմիջեցնող եւ հակաբորբոքային պատրաստուկներ 000

բ) Հզոր անալգետիկ միջոցներ

զ) Սպազմոլիտիկ միջոցներ 000

1.4. Նյարդային համակարգ

ա) Տագնապամարիչ միջոցներ 000

բ) Նեյրոլեպտիկ միջոցներ 000

զ) Ծովախտի դեմ միջոցներ 000

դ) Հակաէպիլեպտիկ միջոցներ 000

1.5. Հակաալերգեն եւ անաֆիլակտիկ միջոցներ

ա) H1 հակահիստամինային միջոցներ 000

բ) Սրսկման գլյուկոկորտիկոիդ 000

1.6. Շնչառական համակարգ

ա) Բրոնխոսպազմի պատրաստուկներ 000

բ) Հազի դեմ միջոցներ 000

զ) Մրսածության եւ սինուսիտի ժամանակ օգտագործվող դեղամիջոցներ 000

1.7. Հակավարակիչ միջոցներ

ա) Հակաբիոտիկներ (առնվազն երկու խմբի) 000

բ) Հակաբակտերիալ սուլֆամիդ 000

զ) Երիկամների/միզային հականեխիչներ 000

դ) Հակամակաբուժային միջոցներ 000

ե) Աղիքային հակավարակիչ միջոցներ 000

զ) Փայտացման(տետանուս) դեմ պատվաստանյութեր եւ իմունոգլոբուլիններ 000

1.8. Ռեհիդրատացիա, կալորիականությունը եւ պլազմայի լայնացումը խթանող միացություններ 000

1.9. Արտաքին օգտագործման դեղամիջոցներ

ա) Վերմաշկային դեղամիջոցներ

– Հականեխիզ (հակասեպտիկ) լուծույթներ 000

–Հակաբիոտիկ քսուկներ 000

– Հակաբորբոքիչ եւ անալգետիկ քսուկներ 000

– Հակասնկային մաշկային կրեմներ 000

–Այրվածքների դեմ պատրաստուկներ 000

բ) Աչքի դեղամիջոցներ

–Հակաբիոտիկ) կաթիլներ 000

– Հակաբիոտիկ եւ հակաբորբոքային կաթիլներ 000

– Անզգայացնող կաթիլներ 000

– Աչքի բիբի հիպոտոնիկ (լարվածությունը հանող) կաթիլներ 000

գ) Ականջի դեղամիջոցներ

– Հակաբիոտիկ լուծույթներ 000

– Անզգայացնող եւ հակաբորբոքային լուծույթներ 000

դ) Բերանի եւ կոկորդի վարակման դեպքում օգտագործվող դեղամիջոցներ

– Բերանի ողողման հակաբիոտիկ եւ հականեխիզ միջոցներ 000

ե) Տեղային անզգայացման միջոցներ

– Սառեցման միջոցով տեղային անզգայացման միջոցներ 000

– Տեղային անզգայացման միջոցներ՝ ներմաշկային սրսկման միջոցով 000

– Ատամնաբուժական անզգայացման միջոցներ եւ հականեխիզ խառնուրդներ 000

## 2. ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

### 2.1. Վերակենդանացման սարքեր եւ սարքավորումներ

- Ձեռքով աշխատող վերակենդանացման սարք 000
- Ճնշումը նվազեցնող փակույրի միջոցով կարգավորվող թթվածնի մատակարարման սարք, որով հնարավոր է օգտագործել նավի տեխնիկական թթվածինը կամ թթվածնի տարաները 000
- Մեխանիկական ներծծիչ գործիք (ասպիրատոր)՝ վերին շնչառական ուղիները մաքրելու համար 000
- Բերանից բերան վերակենդանացման խողովակ 000

### 2.2. Վիրակապեր եւ կարան դնելու միջոցներ

- Մեկանգամյա օգտագործման կարիչ կամ կարանի տուփ՝ ասեղներով 000
- Էլաստիկ կաչող վիրակապ 000
- Բինտ-թանզիֆ 000
- Թանզիֆից տամպոն՝ մատների վիրակապի համար 000
- Մանրէազերծ (ստերիլ) թանզիֆից կոմպրես 000
- Բամբակ 000
- Մանրէազերծ (ստերիլ) սավան՝ այրվածք ստացածների համար 000
- Եռանկյունաձեւ վիրակապ 000
- Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենից ձեռնոցներ 000
- Կաչուն վիրակապ 000
- Սեղմող մանրէազերծ վիրակապ 000
- Կաչուն կարաններ կամ ցինկի օքսիդի վիրակապեր 000
- Չներծծվող կարաններ՝ ասեղների հետ 000
- Վազելինով ներծծված թանզիֆ 000

### 2.3. Գործիքներ

- Մեկանգամյա օգտագործման վիրադանակներ (սկալպելներ) 000
- Չժանգոտվող պողպատից գործիքների տուփ 000
- Մկրատներ 000
- Հերձման արցաններ 000
- Արյունը դադարեցնող ( հեմոստատիկ) կեռիկներ 000
- Ասեղ արցաններ 000
- Մեկանգամյա օգտագործման ածելիներ 000

#### 2.4. Հիվանդների հետազոտման եւ հսկողության սարքեր

- Մեկանգամյա օգտագործման՝ լեզուն սեղմելու տափակ գործիք 000
- Մեզի հետազոտության համար ռեակտիվ շերտեր 000
- Ջերմաստիճանի թերթիկներ 000
- Բժշկական տարատեղման սավաններ 000
- Լսափողակ (ստետոսկոպ) 000
- Մեմբրանային սֆիզոմանոմետր 000
- Ստանդարտ բժշկական ջերմաչափ 000
- Հիպոթերմիկ ջերմաչափ 000

#### 2.5. Սրկման, պերֆուզիայի, պունկցիայի եւ զոնդավորման սարքեր

- Ուռույզիայի դրենաժի գործիքներ 000
- Ռեկտալ ներլցման հավաքակազմ 000
- Մեկանգամյա օգտագործման՝ ֆիլտրին միացրած ներարկման սարք000
- Մեզի դրենաժի պայուսակ 000
- Մեկանգամյա օգտագործման ներարկիչներ եւ ասեղներ 000
- Փողածող (կաթետեր) 000

#### 2.6. Ընդհանուր բժշկական սարքեր եւ սարքավորումներ



- Պետքանոթ – տակդիր 000

- Ջեռակ 000

- Մեզի շիշ 000

- Սառույցի տոպրակ 000

2.7. Անշարժացման եւ ամրացման սարքեր

- Մատի անշարժացման ճկուն շինա 000

- Նախաբազկի եւ ձեռքի անշարժացման ճկուն շինա 000

- Փչովի շինա 000

- Ազդրի շինա 000

- Վիզն անշարժեցնելու համար օձիք 000

- Թոմասի շինա կամ հատուկ ներքնակ 000

2.8. Ախտահանում, միջատազերծում եւ կանխարգելում

- Ջրային ախտահանող բաղադրություն 000

- Հեղուկ միջատասպան 000

- Փոշի միջատասպան 000

3. ՀԱԿԱԹՈՒՅՆԵՐ

3.1. Ընդհանուր 000

3.2. Սրտանոթային 000

3.3. Ստամոքսաաղիքային համակարգ 000

3.4. Նյարդային համակարգ 000

3.5. Շնչառական համակարգ 000

3.6. Հակավարակիչ միջոցներ 000

3.7. Արտաքին օգտագործման դեղամիջոցներ 000

3.8. Այլ 000

### 3.9. Թթվաձին մատակարարելու համար 000

Անցկացման վայրն ու օրը՝

Կապիտանի ստորագրությունը՝

Իրավասու անձի կամ մարմնի հաստատումը՝

ԲԱԺԻՆ Բ «Յ» ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՆԱՎԵՐ

I. Նավի մասին տեղեկություններ

Անվանումը՝

Դրոշը՝

Մայր նավահանգիստը՝

II. Բժշկական պարագաներ

1. ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ

1.1. Սրտանոթային՝

ա) սրտանոթային անալեպտիկներ – սիմպատոմիմետիկ 000

բ) Բկաբորբի դեմ պատրաստուկներ 000

գ) Միզամուղ (դիուրետիկ միջոցներ) 000

դ) Հակահեմոռագիկ միջոցներ՝ ներառյալ ուտերոտոնիկները, եթե նավի վրա կանայք կան 000

1.2. Ստամոքսաաղիքային համակարգ՝

ա) Ստամոքսի լորձաթաղանթի բորբոքման (գաստրիտ) եւ տասներկուամատնյա աղիքի (դուոդենիտային) խախտումների համար դեղամիջոցներ

– Հակաթթվային լորձային կապեր 000

բ) Փսխումների դեմ միջոցներ 000

գ) Հակալուծողական միջոցներ 000

դ) Աղիքային հիվանդությունների դեմ հականեխիչներ 000

զ) Թուրքի դեմ պատրաստուկներ 000

1.3. Անալգետիկ եւ սպազմոլիտիկ միջոցներ

ա) Անալգետիկ, ջերմիջեցնող եւ հակաբորբոքային պատրաստուկներ 000

բ) Հզոր անալգետիկ միջոցներ 000

գ) Սպազմոլիտիկ միջոցներ 000

1.4. Նյարդային համակարգ

ա) Տագնապամարիչ միջոցներ 000

բ) Նեյրոլեպտիկ միջոցներ 000

գ) Ծովախտի դեմ միջոցներ 000

1.5. Հակաալերգեն եւ հակաանաֆիլակտիկ միջոցներ

ա) H1 հակահիստամինային միջոցներ 000

բ) Սրսկման գլյուկոկորտիկոիդ 000

1.6. Շնչառական համակարգ

ա) Բրոնխոսպազմի պատրաստուկներ 000

բ) Հազի դեմ միջոցներ 000

գ) Մրսածության եւ սինուսիտի ժամանակ օգտագործվող դեղամիջոցներ 000

1.7. Հակավարակիչ միջոցներ

ա) Հակաբիոտիկներ (առնվազն երկու խմբի) 000

բ) Հակաբակտերիալ սուլֆամիդ 000

գ) Հակամակաբուժային միջոցներ 000

դ) Ադիքային հակավարակիչ միջոցներ 000

զ) Փայտացման(տետանուս) դեմ պատվաստանյութեր եւ իմունոգլոբուլիններ 000

1.8. Ռեհիդրատացիա, կալորիականությունը եւ պլազմայի լայնացումը խթանող միացություններ 000

## 1.9. Արտաքին օգտագործման դեղամիջոցներ

### ա) Վերմաշկային դեղամիջոցներ

- Հականեխիչ լուծույթներ 000
- Հակաբիոտիկ քսուկներ 000
- Հակաբորբոքիչ եւ ցավազրկող քսուկներ 000
- Արվածքների դեմ պատրաստուկներ 000

### բ) Աչքի դեղամիջոցներ

- Հակաբիոտիկ կաթիլներ 000
- Հակաբիոտիկ եւ հակաբորբոքային կաթիլներ 000
- Անզգայացնող կաթիլներ 000
- Աչքի բիբի հիպոտոնիկ (լարվածությունը հանող) կաթիլներ 000

### գ) Ականջի դեղամիջոցներ

- Հակաբիոտիկ լուծույթներ 000
- Անզգայացնող եւ հակաբորբոքային լուծույթներ 000

### դ) Բերանի եւ կոկորդի վարակման դեպքում օգտագործվող դեղամիջոցներ

- Բերանի ողողման հակաբիոտիկ կամ հականեխիչ միջոցներ 000

### ե) Տեղային անզգայացման միջոցներ

- Տեղային անզգայացման միջոցներ՝ ներմաշկային սրսկման միջոցով 000
- Ատամնաբուժական անզգայացման միջոցներ եւ հականեխիչ խառնուրդներ 000

## 2. ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

### 2.1. Վերակենդանացման սարքեր եւ սարքավորումներ

- Ձեռքով աշխատող վերակենդանացման սարք 000
- Ճնշումը նվազեցնող փակույրի միջոցով կարգավորվող թթվածնի մատակարարման սարք, որով հնարավոր է օգտագործել նավի տեխնիկական թթվածինը կամ թթվածնի տարաները 000

– Մեխանիկական ներծծիչ գործիք (ասպիրատոր)՝ վերին շնչառական ուղիները մաքրելու համար 000

– Բերանից բերան վերակենդանացման խողովակ 000

## 2.2. Վիրակապեր եւ կարան դնելու միջոցներ

– Մեկանգամյա օգտագործման կարիչ կամ կարանի տուփ՝ ասեղներով 000

– Էլաստիկ կաչող վիրակապ 000

– Մանրէազերծ թանզիֆից կոմպրես 000

– Բամբակ 000

– Մանրէազերծ սավան՝ այրվածք ստացածների համար 000

– Եռանկյունաձեւ վիրակապ 000

– Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենից ձեռնոցներ 000

– Կաչուն վիրակապ 000

– Սեղմող մանրէազերծ վիրակապ 000

– Կաչուն կարան կամ ցինկի օքսիդի վիրակապեր 000

– Վազելինով ներծծված թանզիֆ 000

## 2.3. Գործիքներ

– Չժանգոտվող պողպատից գործիքների տուփ 000

– Մկրատներ 000

– Հերձման աքցաններ 000

– Արյունը դադարեցնող (հեմոստատիկ) կեռիկներ 000

## 2.4. Հիվանդների հետազոտման եւ հսկողության սարքեր

– Մեկանգամյա օգտագործման՝ լեզուն սեղմելու տափակ գործիք 000

– Բժշկական տարատեղման սավաններ 000

– Ստետոսկոպ 000

- Մեմբրանային սֆիզմոմանոմետր 000

- Ստանդարտ բժշկական ջերմաչափ 000

- Հիպոթերմիկ ջերմաչափ 000

2.5. Սրսկման, պերֆուզիայի, պունկցիայի եւ զոնդավորման սարքեր

- Մեկանգամյա օգտագործման ներարկիչներ եւ ասեղներ 000

2.6. Անշարժացման եւ ամրացման սարքեր

- Մատի անշարժացման ճկուն շինա 000

- Նախաբազկի եւ ձեռքի անշարժացման ճկուն շինա 000

- Փչովի շինա 000

- Ազդրի շինա 000

- Վիզն անշարժեցնելու համար օձիք 000

3. ՀԱԿԱԹՈՒՅՆԵՐ

3.1. Ընդհանուր 000

3.2. Սրտանոթային 000

3.3. – Ստամոքսաաղիքային համակարգ 000

3.4. Նյարդային համակարգ 000

3.5. Շնչառական համակարգ 000

3.6. Հակավարակիչ միջոցներ 000

3.7. Արտաքին օգտագործման դեղամիջոցներ 000

3.8. Այլ 000

3.9. Թթվաձին մատակարարելու համար անհրաժեշտ 000

Վայրն ու օրը՝

Կապիտանի ստորագրությունը՝

Իրավասու անձի կամ մարմնի հաստատումը՝

ԲԱԺԻՆ Գ «Շ» ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՆԱՎԵՐ

I. Նավի մասին տեղեկություններ

Անվանումը՝

Դրոշը՝

Մայր նավահանգիստը՝

II. Բժշկական պարագաներ

1. ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ

1.1. Սրտանոթային՝

ա) Բկաբորբի դեմ պատրաստուկներ 000

դ) հակահեմոռագիկ միջոցներ, ներառյալ ուտերոտոնիկներ, եթե նավի վրա կանայք կան 000

1.2. Ստամոքսաաղիքային համակարգ

ա) Փսխումների դեմ միջոցներ 000

բ) Հակալուծողականներ 000

1.3. Անալգետիկ եւ սպազմոլիտիկ միջոցներ

ա) Անալգետիկ, ջերմիջեցնող եւ հակաբորբոքայի պատրաստուկներ 000

1.4. Նյարդային համակարգ

–Ծովախտի դեմ միջոցներ 000

1.5. Արտաքին օգտագործման դեղամիջոցներ

– Վերմաշկային դեղամիջոցներ

– Հականեխիչ լուծույթներ 000

–Արվաճքների դեմ պատրաստուկներ 000

2. ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2.1. Վերակենդանացման սարքեր եւ սարքավորումներ

– Բերանից բերան վերակենդանացման խողովակ 000

2.2. Վիրակապեր եւ կարան դնելու միջոցներ

– Էլաստիկ կաչող վիրակապ 000

– Մանրէագերծ թանզիֆից կոմպրես 000

– Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենից ձեռնոցներ 000

– Կաչուն վիրակապեր 000

– Սեղմող մանրէագերծ վիրակապ 000

– Կաչուն կարան կամ ցինկի օքսիդի վիրակապեր 000

3. ՀԱԿԱԹՈՒՅՆԵՐ

3.1. Ընդհանուր 000

3.2. Սրտանոթային 000

3.3. – Ստամոքսաղիքային համակարգ 000

3.4. Նյարդային համակարգ 000

3.5. Շնչառական համակարգ 000

3.6. Հակավարակիչ միջոցներ 000

3.7. Արտաքին օգտագործման դեղամիջոցներ 000

3.8. Այլ 000

3.9. Թթվաձին մատակարարելու համար անհրաժեշտ 000

Անցկացման վայրն ու օրը՝

Կապիտանի ստորագրությունը՝

Իրավասու անձի կամ մարմնի հաստատումը՝



ՀԱՎԵԼՎԱԾ V

**ԿԱՊԻՏԱՆԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ  
(հոդված 5 (3))**

I. 1. Ֆիզիոլոգիայի, ախտանշանաբանության եւ թերապեւտիկայի հիմունքների մասին գիտելիքներ

2. Կանխարգելիչ բժշկության, մասնավորապես, անհատական եւ կոլեկտիվ հիգիենա ու հնարավոր կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) միջոցների տարրեր:

3. Բուժման հիմնական տեսակներ իրականացնելու կարողություն եւ ծովում հրատապ հանգամանքներում նավը լքելու գործընթացի ղեկավարում:

A կատեգորիայի նավերի վրա բուժման համար պատասխանատու անձը պետք է հնարավորության դեպքում կարողանա գործնական վերապատրաստում անցնել հիվանդանոցներում:

4. Մանրամասն գիտելիքներ այն մասին, թե ինչպես օգտագործել հեռահար կառավարման բժշկական խորհրդատվության տարաբնույթ միջոցները:

II. Այս վերապատրաստման ժամանակ պետք է հաշվի առնել միջազգային համապատասխան փաստաթղթերի ծրագրային հրահանգների վերջին տարբերակները: